



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2014թ. թիվ 298-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1789-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կանոնադրության 30-րդ կետի՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել՝

ա/ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի Մայիտակի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ/ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի Ստեփանավանի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

գ/ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի Թումանյանի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

դ/ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի Տաշիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2006 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 208-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. օգոստոսի 15
ք.Վանաձոր